ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով «ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/12» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Ախուրյան «06» «մայիսի» 2022թ.
ժամը 11:00

*Մասնակցում էին*

*Հանձնաժողովի նախագահ*՝ Իկիլիկյան Վարդան Ներսեսի /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի տեղակալ/

*Անդամներ*՝ Հովիկ Սպիրիդոնի Մելքոնյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակից/
Անահիտ Արամայիսի Յավրումյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

*Հանձնաժողովի քարտուղար*՝ Ինգա Հովհաննեսի Մարտիրոսյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

***«ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին.***

Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի, Գյումրու խճուղի 42 հասցեում: Գնման առարկա է հանդիսանում՝ **ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ ձեռքբերումը:**

Գնումը կատարվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա.

### 1. Գնանշման հարցման **ձևով գնման հայտերի բացման մասին**

(Վարդան Իկիլիկյան)

1.1. Ընդունել ի գիտություն

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը<br>էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 2 | «ՄԱԼԿ» ՍՊԸ | ք. Գյումրի Տիգրան Մեծի 1 | malkgroup@yahoo.com<br>հեռ.՝ +374 43 52 25 81 |
| 3 | «ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ | Հաղթանակի Պ/Ծ/ 64 Գյումրի Շիրակ Հայաստան | businessellit@mail.ru<br>հեռ.՝ +374 77 87 77 79 |
| 4 | «ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | ք. Երևան, Ծարավ աղբյուր 55/17 | artdaniell@gmail.com<br>հեռ.՝ +374 98 212 821 |

բ/ **Գնանշման հարցման** հայտարարությամբ սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պայմաններին չհամապատասխանող հայտեր չեն ներկայացրել:

1.2. **Գնանշման հարցման հայտարարությամբ** սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հայտարարությամբ սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին.
- Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմված են բնօրինակից և երկու օրինակ պատճենից:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

1.3. Հանձնաժողովի նախագահը՝ Վարդան Իկիլիկյան հայտարարեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

1-ին չափաբաժին՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայրի ոռոգման ցանցի արդիականացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:

| N | Կազմակերպության անվանումը | Ինքնարժեք /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | «ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | 2000000 (Երկու միլիոն դրամ) | - | 2000000 (Երկու միլիոն դրամ) |
| 2 | «ՄԱԼԿ» ՍՊԸ | 17000000 (Տասնյոթ միլիոն դրամ) | - | 17000000 (Տասնյոթ միլիոն դրամ) |
| 3 | «ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ | 4500000 (Չորս միլիոն հինգ հարյուր հազար դրամ) | - | 4500000 (Չորս միլիոն հինգ հարյուր հազար դրամ) |

2-րդ չափաբաժին՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի բնակավայրի հին թաղամասի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:

| N | Կազմակերպության անվանումը | Ինքնարժեք /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | «ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | 2500000 (Երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ) | - | 2500000 (Երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ) |
| 2 | «ՄԱԼԿ» ՍՊԸ | 4500000 (Չորս միլիոն հինգ հարյուր հազար դրամ) | - | 4500000 (Չորս միլիոն հինգ հարյուր հազար դրամ) |
| 3 | «ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ | 4000000 (Չորս միլիոն դրամ) | - | 4000000 (Չորս միլիոն դրամ) |

## 2. *ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝*

2.1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման՝ 2020 թվականի մայիսի 21-ի N 788-Ն փոփոխության 40-րդ կետի 6-րդ պարբերության ա, բ և գ ենթակետերի եթե գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ապա գների նվազեցման նպատակով բավարար գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, քանի որ մասնակիցներից «ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը բացակա էր, ուստի հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել և հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

Բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

2.2. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թվականի մայիսի 12-ին ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի, Գյումրու խճուղի 42 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

*Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.*

*Հանձնաժողովի նախագահ՝* ______________ Վարդան Իկիլիկյան

*Հանձնաժողովի անդամներ՝* ______________ Հովիկ Մելքոնյան

______________ Անահիտ Յավրումյան

*Հանձնաժողովի քարտուղար՝* ______________ Ինգա Մարտիրոսյան